



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

### ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝**

Բնապահպանությունը, որպես մարդկության հիմնախնդիր,  
կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

**Առարկան՝**

**Ֆիզիկա**


**Հետազոտող ուսուցիչ՝**

**Ադունիկ Մեջլումյան**

**Ուսումնական հաստատություն՝ Հաղպատի միջնակարգ դպրոց**

**Երևան 2022**

Ներածություն	2
1. Ի՞նչ է թափոնը, ինչպես տարանջատել աղբը թափոնից,ինչպես այն օգտագործել և վերամշակել:	
1.1 Թափոնների տեսակները	5
1.2 Շփումը թափոնների հետ	7
1.3 Ռազմավարություններ	9
2. Ի՞նչ առանձնահատկություններ ունի պլաստիկը բնապահպանական տեսանկյունից:	
2.1 Պլաստիկի վերամշակումը	10
2.2 Պլաստիկի տեսակները	11
2.3 Պլաստիկի օգտագործման նրբությունները	12
3. Ի՞նչ է վերամշակվում Հայաստանում	5,14
Եզրակացություն	16
Օգտագործված գրականության ցանկ	17



Պայմանական նշանը ցույց է տալիս թեստային աշխատանքներ, որոնց միջոցով կարող ես արապնդել ստացված գիտելիքները:

## Ներածություն

### Թեմայի արդիականությունը

Ի սկզբանե մարդն օգտվել է բնությունից, օգտագործել է բնության ուժերն ու բարիքները հանուն իր գոյատևման ու բարօրությունը: Բնապահպանությունը միջոցառումների մի համակարգ է, որն ապահովում է բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, բնական ռեսուրսների պահպանումը և վերականգնումը:

Բնապահպանական դաստիարակությունը և կրթությունը գիտելիքների ստացումը, բնապահպանական մտածելակերպի, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է դպրոցից: Սովորողը պետք է իմանա, թե ինչ է թափոնը՝ նրա տեսակները, թափոնների և հատկապես պլաստիկի ոչ ճիշտ օգտագործման վնասների մասին: Գաղափար ունենա բնական միջավայրի աղտոտման աղբյուրների, քիմիական արտադրությունների վնասակար ազդեցությունների մասին: Էկոլոգիական կրթությունը և էկոլոգիական մշակույթը հասարակության առջև կանգնած գլխավոր խնդիրներից է: Որպեսզի խուսափենք շրջակա միջավայրի վրա անցանկալի ազդեցություններից, էկոլոգիական սխալներից, որոնք հետագայում դառնում են աղետ, աշակերտը պետք է զինված լինի տարրական բնապահպանական գիտելիքներով և մտածողությամբ: Շատ կարևոր է յուրաքանչյուրիս վերաբերմունքը շրջակա միջավայրի հանդեպ, թափոնների տեսակավորումը և վերամշակումը կարող է լուծել բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, որի արդյունքում կունենանք մաքուր և հաճելի միջավայր: Այնպես, որ մենք բոլորս լինելով սպառողներ պետք է դրսևորենք ճիշտ և գրագետ վարքագիծ:

### Հետազոտական աշխատանքի նպատակները՝

- Բարձրացնել իրազեկությունը թափոնների և դրանց կառավարման մասին:
- Գաղափար տալ բնական միջավայրի աղտոտման աղբյուրների, քիմիական արտադրությունների վնասակար ազդեցությունների մասին:
- Սովորողների մոտ իրազեկման միջոցով առաջացնել հետաքրքրություն և պատասխանատվություն շրջակա միջավայրի հանդեպ, որի արդյունքում կկարողանան բազմաբևեռ նայել բնապահպանական խնդիրներին :
- Սովորողին դարձնել իր շրջակա միջավայրի խնամքի երաշխավորը:

## Հետազոտական աշխատանքի խնդիրները՝

- Կարևոր է բնապահպանական գիտելիքներով, երկրի, շրջակա միջավայրի պահպանությամբ մտահոգված, նոր մտածելակերպով մարդու, քաղաքացու կայացման խնդիրը: Երկիրը սկսվում է տուն, բակ, շրջակա տարածք, համայնք, քաղաք, բնություն միջավայրերից , և այն պահպանելը պետք է լինի ապրելակերպ, մտածելակերպ:
- Անհրաժեշտություն է ծանոթանալ շրջակա միջավայրի բնապահպանական խնդիրներին և փորձել գտնել սեփական լուծման եղանակները:

## Արժևորում

- Շրջակա միջավայրի ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա:
- Մաքուր միջավայրի կարևորությունը:
- Թափոնների տեսակավորման և վերամշակման կարևորությունը:
- Անհատի դերը բնության պահպանման գործում:
- Պատասխանատու վարքագծի ձևավորումը և դրսևորումը էկոհամակարգի պահպանման գործում:
- Գիտակից սպառողական վարքագծի դրսևորումը:
- Բնապահպանական միջոցառումների պարբերական անցկացումը:

# 1. Ի՞նչ է թափոնը, ինչպես տարանջատել աղբը թափոնից,ինչպես այն օգտագործել և վերամշակել:

Արևմտյան երկրները «թափոն»-ը սահմանում են որպես


«նյութեր կամ իրեր, որոնք կորցրել են իրենց նշանակությունը սկզբնական օգտագործողի համար՝ արտադրության, վերափոխման կամ սպառման իմաստով, և որոնցից վերջինս ցանկանում է ազատվել: (ըստ Բազելի կոնվենցիայի, Շվեյցարիա, 1980 թ

«Թափոն»-ի սահմանումը մեծապես կախված է նրանից, թե կոնկրետ մշակույթն ինչ արժեք է վերագրում տվյալ իրին կամ նյութին: Թափոնների ազդեցության, դրանց կառավարման կարևորության աստիճանը կախված է տվյալ երկրի կամ մշակույթի զարգացման աստիճանից:

Միննույն իրը կամ նյութը մի մշակույթում կարող է համարվել թափոն, մինչդեռ մեկ այլ մշակույթում՝ ոչ:

## Ի՞նչն էս համարում թափոն:

<https://wow.boomlearning.com/play/RWGynotLKvnCDGTpF/1?card=vzm7bKonc6Ng2amu8>



Թափոնների գործածությունը գործողությունների համախումբ է, որն ուղղված է դրանց գոյացման կանխարգելմանը, հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասազերծմանը և թաղմանը:

Թափոնների հավաքումը կապված է դրանց հեռացման և հատուկ հատկացված տեղերում կամ օբյեկտներում տեղադրման հետ (ներառյալ նաև տեսակավորումը):

Պահումը թափոնների ժամանակավոր տեղադրումն է հատուկ հատկացված տեղերում՝ հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով:

Օգտագործումը թափոնների կիրառումն է ապրանքների արտադրության, էներգիայի ստացման կամ այլ նպատակներով:

## Թափոնների մշակում

Մշակումը կամ վերամշակումը տեխնոլոգիական շարժընթացների իրականացումն է, որոնցով փոխվում են թափոնների ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունները (օրինակ՝ արտադրական թափոնից ստացվել է բարձրարժեք էթինոլային լաք):

## Թափոնների օգտահանում

Օգտահանումը թափոնների օգտագործումն է որպես երկրորդային նյութ (օրինակ՝ տուֆային թափոնները, որպես ջրախառնիչ հավելույթներ, մեծացնում են արտադրանքի ամրությունը, «Կոտայք» գարեջրի գործարանի արտադրական թափոններն օգտագործվում են որպես անասնակեր) կամ էներգետիկ պաշար:



## Թափոնների հեռացում

Թափոնների հեռացումը գործողությունների համախումբ է, որն օգտահանման նպատակ չունի:

## Թափոնների վնասագերծում

Վնասագերծումը թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցումը կամ վերացումն է՝ մեխանիկական, ֆիզիկաքիմիական կամ կենսաբանական մշակմամբ:

## Թափոնների տեղադրում

Տեղադրումը թափոնների մեկուսացումն է, հետագա օգտագործման բացառումը և ուղղված է դրանց չեզոքացմանն ու շրջակա միջավայրում վտանգավոր նյութերի հետագա տարածման կանխմանը:

## Թափոնների թաղում

Թաղումը թափոնների վերջնական տեղադրումն է հատուկ առանձնացված տեղերում, որով բացառվում է դրանց վտանգավոր ներգործությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա:

## Թափոնների փոխադրում

Փոխադրումը թափոնների տեղափոխումն է դրանց գոյացման կամ պահման վայրերից դեպի մշակման, օգտահանման կամ հեռացման վայրեր:

## Թափոնների վերամշակումը Հայաստանում




Արդյունաբերական թափոնների կրճատման նպատակով ՀՀ-ում մշակվել է են քիմիական նոր տեխնոլոգիաներ (օրինակ՝ չհագեցած միացությունների հալոգենացումը ցածր ջերմաստիճանում պրոտոնագուրկ երկրենո

լուծիչներում իրականացնելիս նպաստում է քլորոպրենի արտադրական թափոնի կրճատմանը):  
 Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են թափոնների բացասական ներգործությունից մարդու առողջության և չրջակա միջավայրի պահպանումը, նյութահումքային և էներգետիկ պաշարների թույլատրելի օգտագործման ապահովումը, թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի գուգակցումը:

Թափոնների գործածության ընթացքում մշակվում են սանիտարական և հակահամաճարակային կանոններ, հիգիենային չափորոշիչներ՝ մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով:

Մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության ու թափոնների ծավալների նվազեցման նպատակով թափոնների գործածության մեջ ներգրավված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանվում են թափոնների տեղադրման սահմանաքանակներ՝ շրջակա միջավայրի վրա սահմանային թույլատրելի վտանգավոր ներգործությունների չափորոշիչներին համապատասխան:



Հանքային թափոններ

1. Հող, ավազ և քար
2. Շինարարական/քանդման աշխատանքներից առաջացած թափոններ
3. Ջերմային էլեկտրակայանների գործունեությունից և այլման այլ գործընթացներից մնացած մոխիր ու խարամ
4. Հանքարդյունահանման արդյունքում առաջացած թափոններ

5. Բաց եղանակով խճի և ավազի արդյունահանման թափոններ

6. Մետաղաձուլման աշխատանքներից առաջացած թափոններ

7. Ճանապարհների ու շինությունների կառուցման և քանդման հետևանքով առաջացած թափոններ

### Մունիցիպալ թափոններ



Կենցաղային (սպառման)

և արդյունաբերական (արտադրական)

թափոնների սպառման ու արտադրության ընթացքում գոյացած հումքի, նյութերի և այլ արգասիքների, արտադրանքի կամ մթերքի մնացորդներ են, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք չեն

համապատասխանում սահմանված

պահանջներին (խոտան) կամ կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները:

Արդյունաբերական թափոններ են նաև օգտակար հանածոների արդյունահանման

մակաշերտի ապարները, անտառահատման մնացորդները:

1. Պիտանիության ժամկետը լրացած սննդամթերք
2. Մննդային թափոններ
3. Փաթեթավորման մի շարք տեսակներից առաջացած թափոններ
4. Թղթի թափոններ
5. Ապակու թափոններ
6. Էլեկտրոնային թափոններ
7. Այգեգործական թափոններ
8. Տեքստիլ թափոններ
9. Մետաղական թափոններ
10. Պլաստամասե թափոններ



Առևտրային, արդյունաբերական և բժշկական թափոններ

Վտանգավոր թափոններն իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական

հատկություններով կարող են վտանգ ստեղծել մարդու առողջության ու շրջակա

միջավայրի համար, ուստի և պահանջում են իրենց հետ վարվելու հատուկ եղանակներ ու

միջոցներ: Վտանգավոր թափոններ են նաև այն արտադրանքը, հումքը և նյութերը, որոնք չեն



համապատասխանում սահմանված չափորոշիչներին և, էկոլոգիական ու սանիտարահիգիենային պահանջներից ելնելով, պիտանի չեն օգտագործման:


1. Արդյունաբերական թափոններ
2. Սննդի արտադրության թափոններ
3. Ռադիոակտիվ թափոններ
4. Արտադրական թափոններ
5. Մպանդանոցների թափոններ
6. Թունավոր թափոններ
7. Բժշկական թափոններ



<https://wow.boomlearning.com/play/57glr55zk6KwNNov7/1?card=28YSPdzD9XsxG95Np>

Ըստ ազդեցատային վիճակի՝ թափոնները լինում են

- պինդ,
- հեղուկ
- գազային:



*Պինդ* թափոններ են մետաղների, պլաստմասսաների, ապակու, թղթի մնացորդները, աղբը (սննդի մնացորդները), մաշված մեքենաները, սարքավորումները, գործիքները և այլն:

*Հեղուկ* թափոններ են արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերը:

*Գազային* թափոններ են ձեռնարկությունների և տրանսպորտի արտանետումներ:

### «Թափոնների հետ շփումը»

Թափոնների հետ մարդու շփման ընթացքում կան մի շարք գործողություններ, որոնց միջոցով կարելի է խուսափել թափոններից՝ նվազեցնելով դրանց ծավալը:

Ի՞նչի մասին պետք է իրազեկել աշակերտներին

- Թափոններն անհրաժեշտ է տարբերակել և խմբավորել:
- Թափոններն ունեն արժեք և դրանք կարող են վերաօգտագործվել:
- Թափոնների անհատական կառավարում որոշակի գործողությունների միջոցով:




Թափոններից խուսափելու գործողություններ

- Մնդի պաշարների ավելի լավ պլանավորում
- Թափոններից խուսափելու գործողություններ
- Գնելու փոխարեն վարձակալում
- Թափելու փոխարեն նորոգում
- Նախքան նոր իր ձեռք բերելը ինչպես հարկն է կշռադատել
- Բազմակի օգտագործման փաթեթավորմամբ իրերի գնում
- 

Ինչպես նվազեցնել պլաստիկի օգտագործումը


Պարզապես պլաստիկը փոխարինեք այլընտրանքով



Տեսակավորեք աղբը՝ առանձնացնելով վերամշակման ենթակա պլաստիկը, և հանձնեք այն վերամշակող կառույցների

Հորդորեք ընկերներին հետևել Ձեր օրինակին

Ռազմավարություններ.



Շատ կարևոր է յուրաքանչյուրիս վերաբերմունքը շրջակա միջավայրի հանդեպ, թափոնների տեսակավորումը և վերամշակումը կարող է լուծել բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, որի արդյունքում կունենանք մաքուր և հաճելի միջավայր: Այնպես ,որ մենք բոլորս լինելով սպառողներ պետք է դրսևորենք ճիշտ և գրազես վարքագիծ:

## 2.Ի՞նչ առանձնահատկություններ ունի պլաստիկը բնապահպանական տեսանկյունից:

Թափոնը ունի արժեք և այն կարող է վերամշակվել և վերաօգտագործվել

Պլաստիկ թափոնների տարանջատումը կարևոր է հետագա վերամշակման համար:

### Ի՞նչ է պլաստիկի վերամշակումը:

Պլաստմասի վերամշակումը վերամշակման կամ

վերաօգտագործման նպատակով տարբեր

տեսակի պլաստիկների օգտագործման և

վերականգնման գործընթաց է:



Պլաստիկի վերամշակումն էական պրակտիկա է

շրջակա միջավայրի վրա այս հումքի աղտոտող ազդեցությունը նվազեցնելու համար: Միևնույն

ժամանակ, դա նոր ապրանքների զարգացման համար ներդրումներ ստանալու միջոց է:

### Վերամշակման ձևեր

Կախված պլաստիկի տեսակից, կկիրառվի վերամշակման այս տեսակներից մեկը.



Շոի կափարիչների վերօգտագործում

#### Մեխանիկական վերամշակում

Դա գործընթաց է, որը բաղկացած է հինգ փուլից.

1. **Մաքրում.** մնացորդները, որոնք կարող են փոխել վերջնական արտադրանքը, վերացվում են:
2. **Բաժանում.** Պլաստմասը դասակարգվում է ըստ իր տեսակի:
3. **Trituration.** պլաստմասը կրճատվում է մինչև հասնի հացահատիկների չափի:
4. **Լվացված** հացահատիկները կամ մակրոմոլեկուլները կրկին մաքրվում են `դրանց հիգիենան ապահովելու համար:
5. Այնուրիհետև պլաստիկ թափոնների կրճատումն է, որպեսզի դրանք նորից վերամշակվեն:

## Էքստրուզիա

Դա վերամշակման մեթոդ է, որը պահանջում է էքստրուդեր (մի տեսակ ջրաղաց), որին պլաստմասը ներմուծվում է հատիկների տեսքով: Պլաստմասը հալվում է, համասեռացվում և ձևավորվում՝ բազմակի ձևերի ձուլվածքներ ստանալու համար:

Էքստրուդերները պլաստիկի վերամշակման արդյունաբերության մեջ անփոխարինելի բաղադրիչ են, քանի որ դրանք թույլ են տալիս հումքը արագ և շարունակական մշակել:

## Ներարկում

Այն բաղկացած է հալած պլաստմասայից փակ ձուլվածքի ներարկումից, որպեսզի այն ստանա իր ձևը: Չուլը պետք է լինի ցածր ջերմաստիճանում

և ենթարկվի ճնշման՝ ըստ վերջնական արտադրանքի չափսերի: Որքան մեծ է ձուլվածքը, այնքան բարձր է ճնշումը:

## Պայթեցված

Դա տեխնիկա է, որը կիրառվում է բաց ձևերով պլաստիկ մասեր՝ թմբուկներ կամ շշեր ստանալու համար: Այս դեպքում հալված պլաստմասը ներմուծվում է ձուլվածք և ներարկում են օդը՝ այն ամրացնելով ձևի պատերին և վերցնելով ցանկալի ձևը:

Ձեզ կարող է հետաքրքրել վերամշակման մասին ավելին իմանալը

Պլաստիկի տեսակները վերամշակելու համար

Պլաստիկը վերամշակելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե որ ընտանիքին է պատկանում:

Այդ իմաստով կա երկու հիմնական կատեգորիա.

**Թերմոպլաստիկա** դրանք կարող են հեշտությամբ հալվել և շատ ձուլվել, ուստի կարող են մի քանի անգամ վերամշակվել: Այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ դրանք օգտագործվում են, դրանց քիմիական կառուցվածքը ենթարկվում է փոփոխությունների, հետևաբար, դրանց օգտակար կյանքը չի գերազանցում օգտագործման յոթ գործընթացից ավելին:

**Ջերմերմակայուն** դրանք հեշտությամբ հալվել չեն: Այս տեսակի պլաստմասը վերամշակելու համար անհրաժեշտ է փոխել դրանց մոլեկուլային կառուցվածքը, բայց այդ գործողությունը նրանց ստիպում է կորցնել իրենց նախնական հատկությունները:



Որքան է տևում տարբեր տեսակի թափոնների քայքայումն արքավայրում



Պլաստիկ  
Ավելի քան 450 տարի



Բամբակահյուս  
80-200 տարի



Կափ թղթյա տարա  
3 ամսից մինչև 5 տարի



Կաշվե կոշիկներ  
24-40 տարի



Մետաղյալակ տարա  
80-200 տարի



Ցակրիկ  
250-500 տարի



Մետալի թափոններ  
1-6 ամիս



Ռոբյա թափոններ  
2-6 շաբաթ

1988 թ.-ին Միացյալ Նահանգների պլաստմասսայի արդյունաբերության ասոցիացիան ստեղծեց թվային կոդ, որը ծառայում է պլաստիկի վերամշակման բարդության աստիճանի բացահայտմանը:

Այս համակարգի ներքո համար մեկ պլաստմասը վերամշակելու ամենադյուրին տեսակի համար է, իսկ յոթը` ամենադժվարը մշակելու համար:

1. **Պոլիէթիլենային տերեֆալատ (PET):** Այն գտնվում է ըմպելիքների շշերի և տեքստիլ մանրաթելերի մեջ:

2. **Բարձր խտության պոլիէթիլեն**

(**HDPE**) կաթնային տարաներ, շարժիչային յուղ, լվացող միջոցներ:

3. **Պոլիմիսիլ քլորիդ (ՊՎԶ)**` ուտելի յուղով տարաներ, շամպունի շշեր:
4. **Ծածր խտության պոլիէթիլեն (LDPE)** փաթեթավորող թուղթ և մթերային պայուսակներ:
5. **Պոլիպրոպիլեն (PP)** շշերի կափարիչներ, սորբեթներ, մածուխի տարաներ:
6. **Պոլիստիրոլ (PS կամ ABS)** մսով սկուտեղներ և տաք ըմպելիքների բաժակներ:
7. **Պոլիկարբոնատներ, պոլիամիդներ կամ պոլիուրեթաններ** ապրանքներ, որոնք պատրաստվում են տարբեր պլաստիկ խառնուրդներով:

Պլաստիկ շշերը միշտ նշում են պիտակի վրա, թե ինչ տեսակի պլաստիկից են դրանք պատրաստված: Եվ այս տեղեկատվությունը շատ կարևոր է: Ի վերջո, ցանկացած պլաստիկ շի պարունակության մեջ կթողնի տարբեր աստիճանի վտանգավորության քիմիական նյութեր:

Ցանկացած շիշ պարունակում է այս նշումներից մեկը: Եվ ահա թե ինչ է նշանակում այդ ամենը.

Մրանք PET կամ մեկանգամյա օգտագործման շշեր են: Նրանք կարող են հեղուկի մեջ արձակել ծանր մետաղներ և նյութեր, որոնք ազդում են մարդու հորմոնալ հավասարակշռության վրա:

PET-ն աշխարհում ամենից հաճախ օգտագործվող պլաստիկի տեսակն է: Կարևոր է հիշել, որ այն նախատեսված է ՄԵԿ ԱՆԳԱՄ օգտագործման համար: Եթե ջուրը լցնում եք նման շի մեջ, ապա պատրաստվեք այն բանին, որ որոշ ալկալային տարրեր և չափազանց շատ բակտերիաներ կարող




են ներթափանցել ձեր օրգանիզմ, որոնք բառացիորեն պաշտում են PET-ներին: Դա շատ լավ պլաստիկ է, որը գործնականում ոչ մի վնասակար նյութ չի արտանետում: Մասնագետները խորհուրդ են տալիս հնարավորության դեպքում ջուր գնել նման շշերով: Այն և՛ անվտանգ է, և՛ էկոլոգիապես օգտակար. գրեթե ամբողջ պլաստիկը վերամշակվում է:

Այն պլաստիկի կոշտ տեսակ է և առավել հաճախ օգտագործվում է կաթ, խաղալիքներ, լվացող միջոցներ պահելու և որոշ պլաստիկ տոպրակներ պատրաստելու համար:

### **ՊՎՔ կամ Վ**

Այս նյութից իրերը արտագատում են առնվազն երկու վտանգավոր քիմիական նյութեր: Երկուսն էլ



բացասաբար են ազդում ձեր հորմոնալ

հավասարակշռության վրա:

Այն փափուկ, ճկուն պլաստիկ է, որը սովորաբար

օգտագործվում է պահեստավորման համար բուսական

յուղ և մանկական խաղալիքներ: Այն նաև օգտագործվում է

անհամար սպառողական ապրանքների համար

բշտիկների փաթեթներ պատրաստելու համար: Այն նաև օգտագործվում է համակարգչային մալուխները պատելու համար: Դրանից պատրաստված են պլաստմասե խողովակներ և սանտեխնիկայի մասեր:

ՊՎՔ-ն համեմատաբար անզգայուն է ուղղակի արևի լույսի և եղանակի նկատմամբ, այդ իսկ պատճառով այն հաճախ օգտագործվում է նաև պատուհանների շրջանակների և այգիների գուլպաների համար: Այնուամենայնիվ, փորձագետները խորհուրդ են տալիս ձեռնպահ մնալ այն գնելուց, եթե կարող եք այլընտրանք գտնել:

Այս պլաստիկն օգտագործվում է ինչպես շշերի, այնպես էլ պոլիէթիլենային տոպրակների արտադրության մեջ: Այն չի արտանետում քիմիական նյութեր իր կուտակած ջրի մեջ:

Բայց դա անվտանգ է միայն ջրի համար նախատեսված տարայի դեպքում: Ավելի լավ է մթերային խանութում դրանից պայուսակներ չգնել. դուք կարող եք ուտել ոչ միայն այն, ինչ գնել եք, այլ նաև ձեր սրտի համար շատ, շատ վտանգավոր քիմիական նյութեր:

Այս պլաստիկն ունի Սայխտակ գույն կամ կիսաթափանցիկ երանգներ: Օգտագործվում է որպես օշարակների և յոգուրտի փաթեթավորում:

Պոլիպրոպիլենը գնահատվում է իր ջերմային կայունության համար: Երբ այն տաքանում է, այն չի հալվում: Համեմատաբար անվտանգ:

### **ԱՀ կամ պլաստիկ առանց հատուկ նշանների**

Սա պլաստիկի ամենավտանգավոր տեսակն է: Օգտագործվում է ջրի շշերի և սննդի տարաների արտադրության մեջ:

Պոլիկարբոնատային տարայի մեջ սննդամթերքը կամ ջուրը պահելը կտրականապես անհնար է. այն արտազատում է բիսֆենոլ A՝ հայտնի նյութ, որը ոչնչացնում է ձեր [էնդոկրին համակարգ...](#) Ճնշում է էստրոգեն կոչվող հորմոնի արտադրությունը:

Եվ ահա ևս մեկ բան. Մտածեք երկու անգամ նախքան որևէ պոլիէթիլենային թաղանթով որևէ բան գնելը: Այնուամենայնիվ, ապակին շատ ավելի անվտանգ է:

Բոլոր տեսակի շքեղ պայուսակներ, բանկա և շշեր, որոնք այժմ փաթեթավորվում են [սառը քմայելիքներ](#) և ջուրը մեծ բազմությունն է: Բնապահպանական խնդրի սրման հետ կապված մտավախություններն ու առասպելներն էլ ավելի շատ են:

Վերնագրերը հայտնում են, որ պլաստմասսաների շատ տեսակներ օգտագործում են թունավոր քիմիական նյութեր, որոնք կարող են թափանցել արտադրանք: Հողվածների ամենահայտնի և ահեղ հերոսներն են բիսֆենոլ A-ն և ֆտալատները: Տեսնենք, թե ինչ ասեկոսեներով է լցված համացանցը՝ առասպել, թե իրականություն:

### 3.Ի՞նչ է վերամշակվում Հայաստանում

#### *Թուղթ, ստվարաթուղթ*

Վերամշակվում են՝	Չեն վերամշակվում՝
<ul style="list-style-type: none"> <li>• սպիտակ թուղթ</li> <li>• ստվարաթուղթ, այդ թվում նաև՝ հավկիթի ստվարաթղթե տարաները և խմորեղենի տուփերը</li> <li>• գրքեր</li> <li>• ամսագրեր</li> <li>• տետրեր</li> <li>• կրաֆթ թուղթ, հիմնականում փաթեթավորման համար օգտագործվող թղթերը և թղթե տոպրակները</li> <li>• ծխախոտի տուփեր՝ առաց ներիս փալլաթիթեղի (ֆուգայի)</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• ՀԴՄ կտրոններ</li> <li>• բնական հյութի և կաթի տուփեր</li> <li>• լամինացված թուղթ</li> <li>• անձեռոցիկ</li> <li>• զուգարանի թուղթ</li> </ul>

#### Պլաստիկ

Վերամշակվում են՝	Չեն վերամշակվում՝
<ul style="list-style-type: none"> <li>• ջրի և այլ ըմպելիքների շշեր</li> <li>• պոլիէթիլենային տոպրակներ</li> <li>• հիգիենայի պարագաների ամաններ</li> <li>• խաղալիքներ</li> <li>• կաթնամթերքի տարաներ, այդ թվում՝ թթվասերի և մածուկի տարաները</li> <li>• մրգի պլաստիկե տարաները (թասերը)</li> <li>• PP, PET մակնշմամբ մեկանգամյա օգտագործման սպասք</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• ձայնասկավառակներ</li> <li>• իրեր, որոնց մեջ կան մետաղյա ու պլաստիկից մասեր</li> <li>• ռետինե ձեռնոցներ</li> <li>• ձավարեղենի և մակարոնեղենի փաթեթներ</li> <li>• հավկիթի պլաստիկե տուփերը</li> <li>• ջրի պլաստիկե բաժակները</li> <li>• սննդի փաթեթավորման պլաստիկե պարագաները</li> <li>• յոգուրտի գրեթե բոլոր տարաները</li> <li>• բժշկական դիմակներ</li> <li>• PS մակնշմամբ մեկանգամյա օգտագործման սպասք</li> </ul>

# Ապակի

Վերամշակվում են՝	Չեն վերամշակվում՝
<ul style="list-style-type: none"><li>բոլոր տեսակի և գույնի ապակե տարաներ</li><li>շշեր</li><li>պատուհանի ապակիներ</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>կերամիկական սպասք</li><li>մեքենայի ապակիներ</li><li>Էկրաններ (հեռուստացույցի, համակարգչի)</li><li>լամպեր</li></ul>

## Առաջարկություններ

- Գիտակցել մաքուր միջավայրի կարևորությունը:
- Աղբի և թափոնների տարանջատում
- Թափոնների տեսակավորում և վերամշակում
- Պատասխանատու վարքագծի ձևավորում և դրսևորում :
- Գիտակից սպառողական վարքագծի դրսևորումը:
- Բնապահպանական միջոցառումների պարբերական անցկացումը:



Այսպիսով՝ Երևանում ապրող քաղաքացին մեկ տարվա մեջ միջինը 300կգ, իսկ այլ մարզերում ապրող քաղաքացին միջինը 220կգ թափոն է առաջացնում: Եթե հաշվի առնենք, որ Հայաստանում կյանքի միջին տևողությունը 76 է, ապա մեկ մարդն իր կյանքի ընթացքում 19,760 կգ աղբ է առաջացնում:

որքան հրաշալի կլիներ, եթե յուրաքանչյուր մարդ նախ փորձեր ավելի քիչ աղբ առաջացնել՝ նվազեցնելով աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը և կանխելով դրանց հետագա այրումը կամ տարիների վնասակար քայքայումը, իսկ կուտակած թափոնն (պլաստիկ, ապակի, թուղթ) էլ փորձեր վերաօգտագործել կամ տեսակավորեր և ուղարկեր այն վերամշակման:

Թափոնների պատշաճ կառավարումն ունի բազմաթիվ օգուտներ՝ տնտեսական (աշխատատեղերի ստեղծում, զբոսաշրջության վրա դրական ազդեցություն, ռեսուրսների արդյունավետ կառավարում), հանրային առողջապահական (առողջության ռիսկերի նվազում՝ հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման միջոցով) և բնապահպանական (ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը, վտանգավոր թափոնների աղտոտվածության նվազում) օգուտներ:

Անհատի դաստիարակությունը և կրթությունը գիտելիքների ստացումը, աշխարհայացքի ձևավորումը սկսվում է դպրոցից: Սովորողը պետք է իմանա ,թե ինչ է թափոնը՝ նրա տեսակները, թափոնների և հատկապես պլաստիկի ոչ ճիշտ օգտագործման վնասների մասին: Գաղափար ունենա բնական միջավայրի աղտոտման աղբյուրների, քիմիական արտադրությունների վնասակար ազդեցությունների մասին:

Մեզնից յուրաքանչյուրը կարող է էապես նվազեցնել աղբավայր տեղափոխվող աղբի ծավալը:

Եկե՛ք սկսենք վերաօգտագործել կամ տեսակավորել թափոնները, ինչպես նաև պահանջել, որպեսզի մեր համայնքում նույնպես հասանելի լինի այս հրաշալի հնարավորությունը: Շատ կարևոր է յուրաքանչյուրիս վերաբերմունքը շրջակա միջավայրի հանդեպ, թափոնների տեսակավորումը և վերամշակումը կարող է լուծել բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, որի արդյունքում կունենանք մաքուր և հաճելի միջավայր: Այնպես ,որ մենք բոլորս լինելով սպառողներ պետք է դրսևորենք ճիշտ և գրագետ վարքագիծ:

## Գրականություն

<https://www.unicef.org/>

<https://angaraleshoz.ru/hy/>

<https://hy.wikipedia.org/>

<https://ecoev.ru/>

<https://it-max.pro/>

<https://www.google.ru/>